

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

ԳՈՒՐԳԵՆ, ՍԵՎԱԿ

«Պատմա-բանասիրական հանդեսի» նախորդ երեք համարներում պրոֆ. Ա. Ս. Ղարիբջանը և պրոֆ. է. Բ. Աղայանը իրենց անպայման հետաքրքրական հոդվածներով¹ առաջ են քաշում ո՛չ միայն մեր հասարակայնությանը, այլև հայագիտությանը լուրջ կերպով հետաքրքրող մի շարք հարցեր, որոնց լուծումը մեծ լույս կարող է սփռել և՛ հայ բարբառների առաջացման ու ճյուղավորումների, և՛ հայ լեզվի ծագման ու հին դրական հայերենի՝ գրաբարի կազմավորման և՛, թերևս, հայ էթնոսի ձևավորման հարցերի ուսումնասիրության վրա: Ցավոք պետք է արձանագրել, որ այնքա՛ն բազմազան ու իրարից էապես տարբեր հայ բարբառներով զբաղվող ուսմունքը՝ հայ բարբառագիտությունը միայն վերջերս է սիրտ արել դուրս գալու ստատիկ, նկարագրական ու վերլուծական իր ֆունկցիաներից: Եթե նկատի չունենանք Ն. Մառի հակապատմական ու հակագիտական «լեզվի նոր ուսմունքի» ոգով մոտ անցյալում մեզ մոտ կատարված անհեթեթ ընդհանրացումներն ու համադրությունները՝ ապա նոր-նոր է հայ բարբառագիտությունը մտնում կուտակված առատ նյութի համադրական ուսումնասիրության և հայոց լեզվի ու հայ էթնոսի գոյացման ու պատմության տեսակետից այդ նյութի մասին գիտական ընդհանրացումներ, տեսական ելրակացություններ անելու ասպարեզը: Եվ այդ միանգամայն հասկանալի է: Վերջին երկու տասնամյակի ընթացքում գիտությունը մատչելի դարձած հայ բարբառների քանակը համարյա կրկնապատկվեց, ո՛չ միայն հրապարակ հանվեցին մինչ այդ անծանոթ տասնյակ բարբառներ, ո՛չ միայն կատարվեցին որոշ վերադասավորումներ բարբառների արդեն ծանոթ ճյուղերի ներսում, ո՛չ միայն լիակատար հավաստում և արդարացում գտավ պրոֆ. Աճառյանի ձևաբանական նկարագրության մեթոդը, այլև հանդես էկան միջճյուղային մի շարք բարբառներ, հայտնաբերվեցին կամ առաջարկվեցին հայ բարբառների երեք նոր ճյուղեր՝ «Ս», «Հա», «Կա», օգտակար կիրառության դրվեց պրոֆ. Ղարիբջանի հնչյունաբանական դասակարգությունը, կատարվեց հայ բարբառների ճյուղերի ավելի խոշոր խմբավորում՝ «մասնիկավոր», «դերբայավոր» և «գրաբարատիպ»: Մոտ անցյալում հայ բարբառներով զբաղվող հատուկ ենտ լեզվաբանների հետ այսօր այդ լուրջ աշխատանքին է լծվել մի սովոր երիտասարդություն, որը 1950 թ. լեզվաբանական հայտնի գիտկուսիայից հետո ի դեմս պատմա-համեմատական մեթոդի ունի լեզվաբանական, հետազոտ-

¹ Ա. Ս. Ղարիբջան, հայ բարբառագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում («Պատմա-բանասիրական հանդես», № 1, էջ 18—39), է. Բ. Աղայան, նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին (նույն տետում, № 2, էջ 211—233), Ա. Ս. Ղարիբջան, հայ բարբառների ծագման հարցի շուրջը (նույն տետում, № 3, էջ 241—266):

տական լուրջ աշխատանք կատարելու ստուգված մեթոդ և հայրենագարծության հետևանքով մայր հայրենիքում կենտրոնացող մեր հայրենակիցների շարքերում դեռ պահպանված կենդանի բարբառների մեջ բարբառագիտական ուսումնասիրությունների անսպառ աղբյուր:

Անտեղի չեմ համարում այստեղ ընդգծել այն անժխտելի դրական աշխատանքը, որ կատարել և կատարում է հատկապես պրոֆ. Ղարիբյանը բարբառագիտական կադրերի պատրաստման, բարբառագրական և տեսական-բարբառագիտության հարցերի մշակման ասպարեզում: Պրոֆ. Աճառյանից հետո նա է հանդիսանում այդ բնագավառի ամենակատիվ, անխոնջ մշակը: Իրավացի է նա, երբ իր «Հայ բարբառագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում» խորագրով ընդհանրացնող աշխատության մեջ ընդգծում է, որ «Հայ բարբառագիտության գծով աշխատանքը ծավալվել է ուղի լայնուրյամբ»¹:

Մեզ թվում է, սակայն, որ նույնը չի կարելի ասել հայ բարբառագիտության գծով կատարվող աշխատանքների խորությամբ մասին և որ այդ աշխատանքների լայնությունը արդեն հանգեցնում է ոչ թե անհրաժեշտ խորության, այլ խոր հակասության: Այդ հակասությունն է, որ անընդհատ տարածայնությունների աղբյուր է դարձել հայ լեզվաբանների ու լեզվի պատմաբանների շրջաններում, այդ հակասությունն է, որ ըստ երևույթին անհաշտ բանավեճի առարկա դարձավ պրոֆ. Աղայանի և պրոֆ. Ղարիբյանի միջև մեր «Հանդեսի» էջերում: Եվ այդ հակասության էությունն այն է, որ լայնքով ըստ ամենայնի ծավալված հայ բարբառագիտությունը որպես կանոն, մինչև այժմ մնում է սկարագրական բարբառագիտության մակարդակին. հայտնաբերելով ու նկարագրելով նորանոր բարբառներ, բարբառային խմբեր ու ճյուղեր՝ նա չի կարողանում բարձրանալ մինչև բարբառագիտության որպես պատմական (պատմահամեմատական) գիտության աստիճանը և սկսում է անսպասելի ու հախուռն ընդհանրացումներ անել հայագիտության ամենաբարդ հարցերից մեկի՝ հայ լեզվի ծագման հարցի վերաբերյալ:

Հայ բարբառագիտությունը մինչև այժմ իր ուղղվածությամբ կատարել է (և պետք է ասել՝ հաջող) մի բան. գիտականորեն նկարագրել է հաջորդական տրոհման, բաժանման, տարրերակման այն պրոցեսը, որ ապրել է հայ լեզուն պատմական (մասամբ և նախապատմական) շրջանում: Մեր լեզուն պատմականորեն հետզհետե ճյուղավորվել է, տվել բարբառներ, ենթաբարբառներ ու խոսվածքներ, մեր բարբառագիտությունն էլ հետզհետե կարողացել է դիտել, նկարագրել ու նորանոր ստորաբաժանումներ կատարել հայ բարբառների աշխարհում:

Այսպես, եթե պրոֆ. Աճառյանը նկարագրել էր բարբառների 3 ճյուղ ընդամենը 26 բարբառով, պրոֆ. Ղարիբյանը նկարագրում է մոտ 56 բարբառ՝ բաժանելով դրանք 6—7 ճյուղի, պրոֆ. Աճառյանը ընդոմնում էր մեկ «Լիս» ճյուղ, պրոֆ. Ղարիբյանը այդ ճյուղը բաժանեց երկուսի՝ «Լ» և «Ս» ճյուղերի, պրոֆ. Աճառյանը ընդունում էր մեկ «Կը» ճյուղ, պրոֆ. Ղարիբյանը այն բաժանեց 3 ճյուղերի՝ «Կը», «Կա» և «Հա»: Կարելի է կատարել և նոր ենթաբաժանումներ՝ «Կու», «Գո», «Գու» և այլն մինչև խոսվածքային ամենանուրբ տարբերությունները, բայց այդ բոլորը կմնան սոսկ նկարագրական բարբառագիտության՝

¹ «Պատմա-բանասիրական հանդես», № 1, էջ 38 (ընդգծումն իմն է—Գ. Ս.):

բարբառագրության սահմաններում, ունենալով նպատակային նեղ սահմաններ: Բարբառագրության իբրև պատմական գիտության նպատակը սակայն ավելի լայն է. նա պետք է կարողանա իր կուտակած լեզվական իրողությունների հիման վրա գնալ պատմական պրոցեսին հակադիր ուղղությամբ, քայլ առ քայլ ընթանալ դեպի ետ՝ ավելի հին վիճակները, վերականգնել հնագույն ձևերը բարբառների ու ճյուղերի ընդհանրությունների հիման վրա, պատմական պրոցեսի տարբերակման գիծը (լեզվական միասնությունից դեպի բարբառային բազմազանություն) բացահայտել միավորումների, ընդհանրացումների, ինտեգրացիայի ճանապարհով (բարբառային բազմազանությունից մինչև գրաբարը և նախահայերենը): Այդ պետք է կատարվի պատմա-համեմատական մեթոդով, բարբառների համեմատական քերականության հարցերը մշակելով և ոչ թե բարբառների համադրական կամ հարադրական նկարագրությամբ, որպիսի աշխատանք որոշ չափով կատարել է պրոֆ. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտության» ստվար հատորում¹, կարծելով թե տալիս է հայ բարբառների «համեմատական հնչյունաբանություն» և «համեմատական ձևաբանություն»: Հայ բարբառների համեմատական քերականությունը, եթե այդ ունենալինք, մեր «Լ» և «Ս» ճյուղերը ստորաբաժանելուց հետո կվերամիավորեն՝ վերականգնելով նրանց նախնական միությունը կամ գոնե մերձավորությունը «Ում» ճյուղի հետ, նույնը կաներ և «Կը», «Կա» և «Հա» ճյուղերի նկատմամբ, կվերհաներ նրանց հնագույն կապը կամ մերձավորությունը գրաբարի հետ և նրանց ու գրաբարի միջոցով կնպաստեր նախահայերենի որոշ տարրերի վերականգնմանը և միայն այնուհետև կարող էր փորձ անել օղակ գցելու դեպի հնդեվրոպական նախալեզուն:

Այլապես պրոֆ. Ղարիբյանի բոլոր պնդումները հայ բարբառների նախագրաբարյան ծագման մասին, մեր բարբառներից մի քանիսին հատուկ շնչեղ-ձայնեղ բաղաձայնների ուղղակի կապի մասին հնդեվր. նախալեզվի հետ և այլն մնում են սոսկ չհիմնավորված պնդումներ, որոնք անտեսում են հայ լեզվի մոտ չորս հազար տարվա զարգացման ամբողջ պրոցեսը և փորձում նույնացնել այդ պրոցեսի այսօրվա եզրերը ծագումնաբանական հնագույն եզրերին:

Գիտական այսպիսի «թուխք», այսպիսի «ազատություն», թող ներվի մեզ ասել, հնարավոր է միայն բարբառագիտության այնպիսի վիճակի պայմաններում, երբ չկա իսկական բարբառագիտություն, որպես լեզվաբանական պատմական մասնաճյուղ: Եվ որքան էլ այդ ցավալի լինի, այսօր էլ մենք հարկադրված ենք կրկնելու հայ բարբառագիտության ուսական շկոլայի ամենաականավոր ներկայացուցիչ պրոֆեսոր Ալեքսանդր Տոմսոնի մոտ 70 տարի առաջ արած դառը խոստովանությունը: Իր «Ժամանակակից հայերենի Թիֆլիսի բարբառի պատմական քերականություն» ծանրակշիռ, բայց թեթևամտորեն մոռացված աշխատության մեջ պրոֆ. Տոմսոնը գրել է. «Բացահայտել լեզվի ամբողջ ներքին կյանքը և ցույց տալ նրա զարգացման պայմանները՝ սկսած հնդեվրոպական նախալեզվից հայ լեզվի բաժանվելու ժամանակից: Սրանով է տարբերվում իմ աշխատանքը հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունը չուսումնասիրած հայագետների աշխատանքից: Նրանց մատչելի չէ հայոց լեզվի ամբողջ հնագույն պատմությունը: Ինքնուրույն կեր-

¹ Ա. Ս. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 107—214:

պով նրանք կարող են խիզախել ոչ ավելին, քան մինչև ընդհանուր հայերենի ճյուղավորումների (распадения) դարաշրջանը» (էջ VI) և ապա՝ «պետք է հանգել այն կզրակացության, որ մենք դեռևս չունենք լիակատար և գոնացուցիչ հետազոտություն հայոց լեզվի և ոչ մի բարբառի»¹ (էջ V, ընդդժմունքները մերն են — Գ. Ս.):

Հայ բարբառագիտությունը շգնաց պատմա-համեմատական լեզվաբանության խստորեն նշած ուղիով և անտեսեց պրոֆ. Պատկանովի, Մսերյանցի, Հանուշի և Տոմսոնի թողած գիտական ժառանգությունն ու փորձը: Դրա հետևանքով էլ վերջին տասնամյակներում իրոք լայնորեն ծավալված մեր բարբառագիտական հետազոտությունները հանգեցրին հենց այդ դժվարություններին, որոնց ցուցադրումն էլ հանդիսանում է սույն հոդվածի նպատակը: Մենք ցանկանում ենք ուշադրություն հրավիրել մասնավորապես հայ բարբառների ծագման այն տեսության վրա, որ ներկայացնում և պաշտպանում է պրոֆ. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտություն» աշխատության և «Պատմա-բանասիրական հանդեսի» 1-ին և 3-րդ համարներում տպած հոդվածների մեջ: Հենվելով հայ բարբառների բաղաձայնական համակարգի և, հատկապես, մի շարք բարբառներում բն, գն, դն շնչեղ ձայնեղ հնչյունների առկայության վրա՝ պրոֆ. Ղարիբյանը ցանկանում է անվիճելի համարել, որ մեր բարբառային խմբերը իրենց հնչյունական համակարգներով սերում են ոչ թե զրաբարի համակարգից, այլ հնդեվրոպական հիմք-լեզվից (նախալեզվից): Թե որքան չհիմնավորված է մեր բարբառների հնչյունական համակարգը ուղղակի հնդեվրոպական հիմք-լեզվից բխեցնելու այս նոր տեսությունը, անմիջապես ակներև կդառնա, հենց որ հարցին մոտենանք ոչ թե ընդհանուր հայտարարություններով ու կանխակալ որոշումներով, այլ կոնկրետ, իրապես՝ վերցնենք ընկեր Ղարիբյանի վերջերս հայտնաբերած ամենահետաքրքրական բարբառներից մեկը՝ Արամոյի բարբառը:

Սա, ինչպես նկարագրում է ընկ. Ղարիբյանը, տեղաշարժ-տեղափոխության խմբին պատկանող և եռաստիճան բաղաձայնական համակարգի ներկայացուցիչ է, այսինքն՝ ունի զրաբարի նման p, b, ph, k, g, kh և այլն բաղաձայնները, սակայն այն տարբերությամբ, որ զրաբարի պարզ խուլերի դեմ ունի ձայնեղներ (k → g, t → d և լն), իսկ ձայնեղների դեմ, ընդհակառակը՝ պարզ խուլեր (g → k, (i) → t և լն), օր. գիշեր → կիշէյր, բայց կախել գախէյլ: Թվում է, թե ավելի սլարզ լացատրելու բան քիչ կգտնվի մեր բարբառագիտության մեջ. ձայնեղների և խուլերի այս տեղափոխությունը հատուկ է մեր շատ բարբառների, արձանագրված է վաղուց և բացատրված:

Սակայն, ընկեր Ղարիբյանը չի բավարարվում գիտության մինչաշխատանք տեսակետով և առաջ է քաշում մի խճճված ու բարդ տեսակետ: Դրա համար նա առաջ և նախ զրաբարը դուրս է հանում իր լաբորատորիայից և այսօր ապրող բարբառը համեմատում 4—5 հազար տարվա վաղեմություն ունեցող հնդ. նախամայր լեզվի հետ: Այդ մեթոդով նա ստանում է հետևյալ հետաքրքրական պատկերը. «Արամոյի բարբառը հնդեվրոպական ձայնեղները պահպանում է»², այսինքն՝ հնդ. b, g, d—Արամոյի բրբ. b, g, d, իսկ «հնդեվր. շնչեղ

¹ А. Томсон. Историческая грамматика современного армянского языка города Тифлиса. СПб, 18 0.

² Լ. Ս. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958, էջ 22:

ձայնեղները Արամոյի բարբառը ենթարկում է տեղաշարժի՝ դարձնելով շնչեղազուրկ խուլ¹, այսինքն՝ հնդ. bh, gh, dh=Արամոյի բրբ. p, k, t:

Ստացվում է, որ այդ բարբառը մի կողմից՝ հաստատուն կերպով պահպանում է հնդեվր. ձայնեղները (b, g, d) ի տարբերություն գրաբարի, որը դրանք վեր է ածել խուլերի (p, k, t), մյուս կողմից՝ երկաստիճան ուսույուն է կատարել շնչեղ ձայնեղներից (bh, gh, dh) մինչև պարզ խուլերը (p, k, t)՝ կորցնելով այդ հնչյունների ձայնեղությունը և շնչեղությունը, ի տարբերություն գրաբարի, որը կատարել է միայն մեկ տեղաշարժ և դրանց դիմաց ունի պարզ ձայնեղներ: Բարբառի շնչեղ խուլերը համապատասխանում են գրաբարի նույն հնչյուններին:

Այսպիսով ստացվում է, որ Արամոյի բարբառը գրաբարից անկախ և ի սկզբանե անտի ունի նրանից տարբեր ծագում ունեցող ձայնեղներ (b, d, g) և խուլեր (p, t, k) և դրանցից ձայնեղները համապատասխանում են հնդեվր. ձայնեղներին, իսկ խուլերը՝ հնդեվր. շնչեղ ձայնեղներին:

Պետք է խոստովանել, որ առաջին և արտաքին հայացքից այս պնդումը թվում է և՛ ճշմարտացի, և՛ գայթակղիչ: Իրոք. հնդեվր. ց-ով բառերի մեջ բարբառը ամենուրեք ունի ց, մինչդեռ գրաբարում k է, և հնդեվր. ք-ով բառերի մեջ բարբառը ամենուրեք ունի k, մինչդեռ գրաբարում ց է: Արդ հարց է առաջանում, եթե բարբառի ց և k զալիս են հնդեվր. ց-ից և ք-ից և ուղղակի կապ չունեն գրաբարի k-ի և ց-ի հետ, ի՞նչ դիրք է բռնում բարբառը այն բառերի նկատմամբ, որոնք բարբառի մեջ մտել են հետագայում, ոչ հնդեվր. նախամայր լեզվից, այլ կա՛մ գրաբարից, կա՛մ որևէ այլ լեզվից, բանավոր ճանապարհով: Իրեն արդեն ձևավորված մի բարբառ, որ տարբերում է k և ց հնչյունները, պահում է արդյոք Արամոյի բարբառը շրջապատի լեզուներից (և գրաբարից) փոխառած բառերի մեջ, թե՛ փոխում է: Պարզ է, որ եթե բարբառը նոր բառերի ց-ն պահում է ց, k-ն պահում է k, կնշանակի նրա հնչյունական համակարգի մեջ ց-ն k դարձնելու հակում չի եղել ի սկզբանե, իսկ եթե նա ց-ն k է դարձնում և ընդհակառակը՝ k-ն ց-ի վերածում, նշանակում է նրա մեջ այդ հակումը հին է և ուրեմն նրա ց-երը ծագել են գրաբարի k-ից, իսկ k-երը՝ գրաբարի ց-ից: Ահա օրինակներ. katu բրբ. gada, ekeleci բրբ. gilica և այլն, և ընդհակառակը՝ grel բրբ. krejī, grpan բրբ. kraboun, շաբաթ բրբ. շապուտ և այլն:

Արդ ինչո՞ւ և ի՞նչ հիման վրա է բարբառը ոչ հնդեվրոպականից եկող նոր բառերի մեջ k-ն դարձնում ց, իսկ ց-ն դարձնում k. Երբ ինքը ունի և՛ ց, և՛ k որպես իրարից միանգամայն տարբեր հնչյուններ. ինչո՞ւ և ի՞նչ հիման վրա ամբողջ շրջապատում և ամենուրեք k-ով և t-ով արտասանվող կատու բառը (katu, kata, kot, katce և այլն) Արամոյի բարբառը դարձրել է gada. ինչո՞ւ և ի՞նչ հիման վրա ամենուրեք k-ով արտասանվող եկեղեցի բառը (ekeleci, eklecia ևն) այստեղ հանկարծ դարձել է gilica, երբ բարբառը k ունի և կարող էր արտասանել kilica?

Այս հարցը կարող է ունենալ միայն և միայն մեկ պատասխան. բարբառի արտասանական այն առանձնահատկությամբ, որ k-ն վերածում է ց-ի, իսկ ց-ն՝ k-ի ամենուրեք և բոլոր դեպքերում, այսինքն՝ բարբառը ամենուրեք, որտեղ գրաբարում կամ ընդհանուր հայերենում կա ց (նույնպես և b, d) դարձ-

¹ Ա. Ս. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, էջ 22:

նում է *k* (նույնպես և *p*, *t*), իսկ որտեղ կա *k* (նույնպես և *p*, *t*) դարձնում է *g* (և *b*, *d*)։ Այլ կերպ ասած՝ այս բարբառի մեջ կատարված է զրաբարի ձայնեղ և խուլ հնչյունների տեղափոխություն և, հետևաբար, բարբառի *g*-ն դալիս է ոչ թե հնդեվր. նախամայր լեզվի *g*-ից, այլ զրաբարի *k*-ից, իսկ բարբառի *k*-ն դալիս է ոչ թե հնդեվրոպ. *g*h-ից, այլ զրաբարի *g*-ից։

Եվ իրոք. այդ ապացուցվում է ոչ միայն հետնագույն ժամանակներում հայերենի մեջ մտած բազմաթիվ բառերով (եկեղեցի, կատու, գրպան, գրել բառերի տիպի), այլ նաև հայերեն ամենահնագույն, նախասկզբնական բազմաթիվ բառերով, որոնք գալիս են ուղղակի հնդեվր. նախամայր լեզվից (այդպիսի բառեր են՝ գայլ, գիտենալ և այլն)։ Այդ բառերը բարբառում ներկայացված են ոչ թե *g*-ով, այլ *k*-ով, որ ըստ Ա. Ղարիբյանի, պետք է ծագած լինի հնդեվր. *g*h-ից։ Սակայն համեմատական լեզվաբանությանը քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր անձնավորություն գիտե, որ այդ բառերը հնդեվր. լեզվում ոչ մի *g*h կամ նույնիսկ *g* չեն ունեցել, դրանց բառասկզբի բաղաձայնը եղել է *w*, և տվել է *wolk*, *wolf*, *wedat* և այլն։ Պարզ է, որ ոչ մի Արամոյի բարբառ չէր կարող հնդեվր. *w* դարձնել *k*, դա անհեթեթություն է։ Պատմա-համեմատական լեզվաբանությունը ապացուցել է, որ այդ *w*-ն պետք է նախապես դառնար *σ* (թեկուզ և *g*h), որից հետո միայն ձայնեղազրկման (և շնչեղազրկման) միջոցով կարող էր վերածվել *k*-ի։ Այո ցույց է տալիս, որ հնդեվր. այդ բառերը հայերենում (լնդհանուր հայերենում) դարձել են *gajl*, *gitel(enal)* և միայն հետո Արամոյի բարբառում վերածվել *kajl*, *kudejl* ձևերի։ Սրանով էլ մի ավելորդ անգամ վկայվում է, որ Արամոյի բարբառի բաղաձայնական համակարգը ուղղակիորեն կապված է ընդհանուր հայերենի (և զրաբարի) հետ, սերում է այդ համակարգից և հետևաբար չի կարող լինել ոչ նրանից անկախ և ոչ էլ նրանից հին։

* * *

Ջարմանալի հեշտ ճանապարհով է պրոֆ. Ղարիբյանը մեր հնագույն լեզվաբանական-քերականագիտական զրականության մեջ ևս գտնում իր այսօրվա տեսակետները իբր թե հաստատող վկայություններ։ Հայ բարբառների հնագույն ծագման ամենահավաստի և ամենակարևոր վկայությունն նա համարում է VIII դարի հայ քերական Ստ. Սյունեցուն։

Դեռևս 1953 թ. հրատարակած իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ (էջ 73—74) և վերջերս «Պատմա-բանասիրական հանդեսի» 3-րդ համարում (էջ 243—244) ընկեր Ղարիբյանը հենվում է Սյունեցու հետևյալ ասույթի վրա. «Եւ եղև թիրութիւն խաւսիցն այսպէս. գնչուք և թոթովատք ևղեալ յազգէն, որ յառաջ քան զմեզ, որք ոչ կարէին զընտրութիւն առնել լծորդացն ի խաւսս իւրեանց յաղագս մերձաւորութեան լծորդացն առ միմեանս, որպէս բէն՝ մենի, պէի և փիւրի և որք մի ըստ միոջ՝ քն. աւանդեցաւ թիրութիւն խաւսից նոցա որդոց իւրեանց որպէս զուղղութիւն յաղագս միայն լնակելոյն և ոչ ումեք գոլոյ մերձաւոր առ նոսա։ Եւ էին նոքա նահապետք իւրաքանչիւր զաւառաց յորժամ էրն տակաւին նուազութիւն մարդկան։ Իսկ սովո-

ոռութիւնն վարժեալ պահեցաւ իբրեւ զաւրէնս յիւրաքանչիւր գաւառի և եղեալ անուանակոչութիւն անմարմնոց և մարմնոց, աճականաց և անաճից»¹:

Ստ. Ստունեցու այս ասույթը, որ, ի դեպ, ոչ մի կապ չունի ոչ միայն հայ բարբառների ծագման, այլև հայոց լեզվի հետ առհասարակ, մենք հարկադրոված ենք նորից թարգմանելու, որովհետև պրոֆ. Ղարիբջանի ներկայացված թարգմանությունը («Հանդես», № 3, էջ 243—244) այնքան դիտումնավոր կերպով ընդմիջարկված ու այլափոխված է, որ, կարելի է ասել, նրա մեջ ոչինչ չի մնացել բնագրի մտքից: Ահա մեր թարգմանությունը.

«Լեզուների թյուրությունը եղավ այսպես. մեզնից առաջ եղած ազգի մեջ կային թվատներ և թոթովախոսներ, որոնք չէին կարողանում լծորդները (նման հնչյունները — Գ. Ս.) տարբերել իրենց խոսքի մեջ (այդ) լծորդների միմյանց նման լինելու պատճառով, ինչպես ր-ն՝ մ-ին, պ-ին և փ-ին և մյուսները նույն կարգով. նրանց լեզվի թյուրությունը ավանդվեց իրենց որդիներին որպես ճշտություն, քանի որ նրանք մենակ էին ապրում և ուրիշ մերձավոր(ներ) չունեին: Եվ դրանք առանձին գավառների նահապետներ էին, երբ դեռ մարդիկ սակավաթիվ էին: Իսկ այդ սովորությունը ամրացավ իբրև օրենք յուրաքանչյուր գավառում և անվանվեցին անմարմիններն ու մարմնավորները, աճողները և չաճողները»:

Որ այս ասույթը վերաբերում է ոչ թե հայոց լեզվին և, մանավանդ, հայ բարբառների առաջացմանը, միանգամայն պարզ է յուրաքանչյուր անկանխակալ ընթերցողի համար: Այստեղ Ստ. Ստունեցին աղավաղման (թյուրություն) տեսությամբ բացատրում է առանձին լեզուների ծագումը մեկ լեզվից, որ հաջորդել է բաբելոնյան աշտարակաշինությանը: Այդ առավել պարզ երևում է նույն ասույթի սկզբի մասից, որ գիտակցաբար զեղչել է պրոֆ. Ղարիբջանի: Ահա և այդ մասը. «Ստուգաբանություն, որ է ուղղություն անուանց և բայից վասն զի յանհմտութենէ խաւից թիւրեալ են անուանք և բայք ամենից ազգաց բաց ի սակաւուց: Եւ արինակ թիւրութեան է այս... Ըստ այսմ արինակի բազումն ընդ ինքեանս անցուցանելով բանիս ի բաժանմանէ լեզուացն մինչև ցայսօր թիւրեցան անուանք և բայք ամենից՝ ազգաց բաց ի սակաւուց ազգաց, որք ունողք արուեստիս այսմիկ յոլովք և անսպառ լեալք պահեցին ամբողջ և ուղիղ զխաւսս ազգաց իւրեանց հրամանաւ թագաւորաց իւրեանց: Եւ եղև թիւրութիւն խաւիցն այսպէս»²: Այսինքն՝ «Ստուգաբանություն, որ նշանակում է անունների և բայերի ուղղում, որովհետև լեզվին անհմտութիւն հետևանքով աղավաղվել են բոլոր ազգերի գոյականները և բայերը, բացի սակավաթիվ ազգերից: Եվ թյուրության օրինակը այս է... Այս օրինակով բաղմաթիվ անցուդարձերի ենթարկվելով, բոլոր ազգերի գոյականները և բայերը լեզուների բաժանումից մինչև այսօր աղավաղվել են բացի սակավաթիվ ազգերից, որոնք այս արվեստին կատարելապես տիրապետելով՝ իրենց ազգերի լեզուն ամբողջ և ուղիղ պահեցին իրենց թագավորների հրամանով: Լեզուների թյուրությունը

¹ Н. Афонц. Дионисий Фракийский и армянские толкователи. էջ 188 (ընկ. Ղարիբջանը այս մեջբերման էջը «Բարբառագիտության» մեջ նշանակել է 181—181, իսկ «Հանդեսի» մեջ՝ 224, թե ինչու, — մեզ հայտնի չէ: Մեզ հայտնի չէ նաև, թե ինչու նա «Հանդեսի» մեջ չի տալիս այդ բերականի անունը (Ստեփանոս Ստունեցի) և, մանավանդ, թե ինչպես է VIII դարի այդ հեղինակին զարձնում XI դարի հեղինակ («Պատմաբանասիրական հանդես», № 3, էջ 243):

² Н. Афонц. նշվ. աշխ., էջ 187—188 (ընդգծումը մերն է — Գ. Ս.):

եղավ այսպես»։ Այնուհետև գալիս է արդեն մեջ բերած ասույթը։ Այսպիսով, խոսքը այստեղ ոչ թե վերաբերում է հայոց լեզվին կամ հայ բարբառների ծագմանը, այլ լեզուների բաժանումից հետո տեղի ունեցած փոփոխություններին, բոլոր ազգերի լեզուների աստիճանական «աղավաղումներին», ուղիղ ձևերից հեռանալուն։

Արդ տեսնենք, թե ինչպես է թարգմանում, ավելի ճիշտ, խմբագրում և մեկնաբանում պրոֆ. Ղարիբյանը Ստ. Սյունեցու այս միամիտ, իր ժամանակի հասկացողությունն արտահայտող մտքերը և ինչպես է դրանք օգտագործում հայ բարբառների ծագման իր տեսությունը հիմնավորելու համար։

Ահա պրոֆ. Ղարիբյանի առաջարկած «թարգմանությունը», որի մեջ, ինչպես ասել ենք, բնագրից ոչ մի միտք չի մնացել։

«Բարբառների թյուրությունը (ծոռումը, աղավաղումը) եղավ այսպես. թվատներ և թոթովխոսներ կային մեզնից առաջ (Հայաստանում — Ա. Ղ.) եղած ազգից (ցեղերից — Ա. Ղ.), որոնք իրենց խոսքի մեջ չէին կարողանում լծորդների տարբերությունն զնել լծորդների միմյանց մերձավոր լինելու պատճառով, ինչպես բեն՝ (բ) մենին (մ. օրինակ՝ բակ-մակ — Ա. Ղ.), պեին (պ. օրինակ՝ բան-պան — Ա. Ղ.) և փյուրին (փ. օրինակ՝ բան-փան — Ա. Ղ.), այսպես նաև այն հնչյունների վերաբերյալ, որոնք միմյանց հետևից էին (այսինքն՝ գ, կ, ֆ, ո, տ, ք — Ա. Ղ.)։ Նրանց խոսքն ավանդվեց նրանց որդիներին որպես ճշտություն այն պատճառով, որ նրանք մենակ էին բնակվում և նրանց մոտ մարդ չկար (այսինքն՝ հալ չկար — Ա. Ղ.)։ Եվ դրանք յուրաքանչյուրը մի գավառի նահապետներ էին, երբ դեռ մարդկանց քչություն կար (այսինքն՝ տոհմական կարգերի ժամանակ, երբ մարդկային հասարակությունները փոքրաթիվ էին — Ա. Ղ.)։ Իսկ սովորությունը վարժություն դարձավ և պահվեց որպես յուրաքանչյուր գավառի օրենք (կանոն — Ա. Ղ.) և եղավ (այդպես — Ա. Ղ.) անվանադրություն անմարմինների և մարմնավորների, աճականների» («Հանդես», № 3, էջ 243—244)։

Տեսնենք, թե ինչ գործողություններ է կատարել պրոֆ. Ղարիբյանը այս «թարգմանության» ընթացքում։

1. Բնադրում ունենք «թիրություն խաւիցն» (լեզվի կամ լեզուների աղավաղում), նա դարձրել է «բարբառների թյուրությունը (ծոռումը, աղավաղումը)»։ Նախ՝ Ստ. Սյունեցին ոչ մի նպատակ չունի բարբառների մասին խոսելու որպեսզի խոսեր նրանց աղավաղումների շուրջը, իսկ երկրորդ՝ եթե նա, ինչպես պրոֆ. Ղարիբյանն է կարծում, ենթադրում էր, թե հայ բարբառները ծագել են հայ լեզվի աղճատումով այս կամ այն գավառում, այս կամ այն օտար ցեղի բերանում, ապա տարրական տրամաբանության իսկ պահանջով այստեղ պետք էր թարգմանել ոչ թե բարբառներ, աղավաղում, այլ լեզվի աղավաղում։

2. Ստ. Սյունեցին խոսում է բայի խոնարհման լծորդությունների մասին (բ||մ||պ||փ), ենթադրելով, թե իր գրածը կարդացողը ծանոթ է Դիոնիսիոս Թրակացու քերականությանը, որի մեկնաբանությունն է հենց իր գրածը, մինչդեռ Ա. Ղարիբյանը միանգամայն անտեսելով Թրակացու քերականությունը՝ իրենից մեկնաբանում է, թե այդ լծորդությունները վերաբերում են հայերենի բարբառային բաղաձայնական համակարգին և նույնիսկ բերում է բարբառային օրինակներ «բան-ման», «բան-պան», «բան-փան», ըստ որում «բան-մանը» ոչ մի կապ էլ չունի «բան-պան» և «բան-փան» հնչյունափոխությունների և այս կամ այն առանձին բարբառի, կամ նույնիսկ բարբառախմբի հետ,

որովհետև հայերենում (բարբառներում) բան բառը տալիս է պան կամ փան, բայց ոչ երբեք ան (այդպես ունենք և թան-ման և քար-մար, և ծուռ-մուռ, և ջուր-մուր և այլն)։ Մի՞թե այստեղ գործում է բարբառային որևէ օրենք կամ մի՞թե մ-ն լծորդ է թ-ին, ք-ին, ծ-ին, ջ-ին և այլն։ Իհարկե ո՛չ։ Ողջ գաղտնիքն այն է, որ Ստ. Սյունեցին, հավատարիմ Թրակացու քերականության սկզբունքներին՝ բ||ս||պ||փ լծորդությունը հիշեցնելով՝ նկատի ունի Թրակացու քերականության հետևյալ հատվածը. «Լծորդութիւն է կարգաւոր խոնարհութիւն բայից. եւ են լծորդութիւնք շեշտոլոր բայից ութ, որոց (1) առաջինն արտաբերի բենիւ, մենիւ, պէիւ, փիրիւ, որդոն ջամբ-եմ, ծամ-եմ, ըմպ-եմ, չափ-եմ»¹։ Այս հատվածի դիմաց եղած հունարեն բնագրում էլ գտնում ենք նման լծորդության օրինակներ՝ լեիր-ո, գրափ-ո, տերպ-ո, կոպտ-ո, որտեղ տրված են բ, փ, պ, պտ լծորդությունները, որոնց համարժեքության համար էլ բերված են հայերեն վերոհիշյալ օրինակները։

Մի՞թե XX դարի գիտնականը իրավունք ունի այդքան ազատ մեկնաբանություններ անելու առանց խորանալու հինավուրց հեղինակի տեքստի բովանդակության մեջ։

3. Ստ. Սյունեցին, նկատի ունենալով լեզուների բաժանման ժամանակներում մեկուսացած սակավամարդ ապրող տոհմերի ու ցեղերի վիճակը՝ գրում է, թե նրանց նահապետների «լեզվի թյուրությունը ավանդվեց իրենց որդիներին որպես ճշտություն, քանի որ նրանք միայնակ էին ապրում և մոտերքում ուրիշ մարդ չկար» — պրոֆ. Ղարիբյանը կամայականորեն խմբագրում է. «Նրանց խոսքն ավանդվեց նրանց որդիներին որպես ճշտություն այն պատճառով, որ նրանք մենակ էին և նրանց մոտ մարդ չկար (այսինքն՝ հայ չկար)»։ Դարձյալ ոչ միայն սխալ թարգմանություն, այլև տարրական տրամաբանության ոտնահարում. եթե այդ նահապետներն ու նրանց որդիները հայ չէին, ապա նրանց լեզուն ի՞նչ կապ ուներ հայերենի հետ և ինչո՞ւ պիտի նրանք աղավաղեին հայերեն բառերը (բան-ման-պան-փան), իսկ եթե նրանք հայ էին, ապա ինչպես կարող էր Սյունեցին ասել, թե նրանց մոտ հայ չկար։ Սակայն այս «հավելումը» («հայ չկար») պրոֆ. Ղարիբյանը կատարել է այն նպատակով, որ ցույց տա, թե Սյունեցին էլ հաստատում է, որ Հայաստանի գավառներում նախօրոք ապրող ցեղերը հայերենը յուրացնելու պրոցեսում փոփոխել են հայերենը ըստ իրենց լեզուների օրինաչափությունների և այդպիսով ստեղծել հայ բարբառներ։ Բայց նույնիսկ այս դեպքում բնավ հասկանալի չէ, թե ինչպես շրջապատում հայ մարդ չունեցող ինչ-որ ցեղեր կարող էին հայերենը յուրացնել և բարբառներ ստեղծել։

Այս աղճատ թարգմանությունը հար և նման է և մեջբերման սկզբում եղած մի արտահայտության թարգմանության։ Այդ հետևյալն է.

4. Ստ. Սյունեցին Թրակացու և անտիկ լեզվաբանության հասկացողությանը ներդաշնակ՝ նկատի ունենալով լեզուների բաժանման առասպելը՝ գրում է. «մեզնից առաջ եղած ազգի (ժողովրդի, ցեղի — Գ. Ս.) մեջ կային թվատներ և թոթովախոսներ, որոնք չէին կարողանում լծորդները տարբերել իրարից» և այլափոխում էին լեզուն և այլն. — պրոֆ. Ղարիբյանը դարձյալ կամայականորեն աղճատում է այդ միտքը՝ իրենից ավելացնելով «Հայաստանում» բառը և ազգը (ցեղ, ժողովուրդ) թարգմանելով ցեղեր։ Ստացվում է. «թըլ-

¹ Н. Адоку, 224. 224-., էջ 241

վատներ և թոթովախոսներ կային մեզնից առաջ (Հայաստանում — Ա. Ղ.) եղած ազգից (ցեղերից — Ա. Ղ.), որոնք իրենց խոսքի մեջ չէին կարողանում լծորդների տարբերությունն զնել» և այլն: Այստեղ գիտնականը ավելացնում է «Հայաստանում», որպեսզի տեղայնացնի Սյունեցու լեզուների խառնակության կամ բաժանման կապակցությամբ արտահայտած միտքը, և ազգ (ժողովուրդ, ցեղ) թարգմանում է հոգնակի (ցեղեր), որպեսզի պնդի, թե Հայաստանում ապրած նախահայ ցեղերը հայերենի մեջ անհմուտ լինելով՝ այն այլափոխել են և ստեղծել յուրաքանչյուրը մի առանձին հայերեն բարբառ:

Որ Սյունեցու այդ միտքը բնավ չի վերաբերում Հայաստանին և մեր երկրի նախաբնիկ ցեղերին, հաստատվում է ոչ միայն այս մեջբերման կոնտեքստով, այլև նույն Սյունեցու նույն աշխատության «նախերգանքով», որտեղ կարդում ենք. «Իւրաքանչիւր ոք ի նահապետացն ի բաժանման լեզուացն եղեն իբրեւ ստեղծիչ լեզուաց եւ եղաւ այն արէնք եւ սահմանք նոցա յիւրաքանչիւր գաւառա»¹, այսինքն՝ «նահապետներից յուրաքանչյուրը լեզուների բաժանումից դարձավ իբրեւ լեզուների ստեղծիչ և այդ դրվեց նրանց համար իբրեւ օրենք և սահման յուրաքանչյուր գավառում (երկրում)»: Այս նույն մտքի մի այլ տարբերակը առկա է ընկ. Ղարիբյանի մեջբերած հատվածում («Եւ էին նոքա նահապետք իւրաքանչիւր գաւառաց, յորժամ էրն տակաւին նուազութիւն մարդկան»)՝ Միանգամայն պարզ է, որ այս «նահապետները», այս «գավառները» և այս «լեզուները» կամ «խոսքերը» ոչ մի առնչություն չունեն ոչ Հայաստանի, ոչ մեր գավառների, ոչ այդ գավառներում ապրած ցեղերի և ոչ էլ հայոց լեզվի ու նրա բարբառների հետ: Պարզ է նաև, որ ընկ. Ղարիբյանը, անտեսելով Ստ. Սյունեցու լեզվագիտական հայացքը, նրա և Թրակացու քերականագիտական ըմբռնումները և նրա բուն շարադրության ոգին՝ քմահաճորեն «խմբագրել», «մեկնարանել» է նրան, որպեսզի նրա միջոցով «հաստատի», թե հայ բարբառները և պ-բ-ի, տ-դ-թ, կ-զ-ք հնչյունափոխությունը գալիս են տեղաբնիկ ոչ հայկական ցեղերի լեզուներից:

Ահա պրոֆ. Ղարիբյանի այդ հետևությունները. «Ինչպես տեսնում ենք քերականը հայերենի բաղաձայնական սիստեմի տեղաշարժը $p \rightarrow պ \rightarrow փ$ (բառ $\rightarrow$ պառ $\rightarrow$ փառ) բացատրում է նրանով, որ հայերենից առաջ եղած բնիկները լեզվի անվարժության պատճառով լծորդակից հնչյունները չեն տարբերել միմյանցից, արտասանել են միանման և այնուհետև ամբողջական սիստեմ դարձնելով հաղորդել են սերնդե սերունդ: Եվ այնուհետև այդ վարժեալ սովորությունը պահվել է իբրև յուրաքանչյուր գավառի օրենք:

Այլ կերպ ասած՝ ամեն մի գավառի բարբառային արտասանությունը հետևանք է բնիկների կողմից հայերենը յուրացնելու պրոցեսում հայերենի բաղաձայնական սիստեմը իրենց լեզվի հնչյունական օրենքներին ենթարկելու սովորության, որ այժմ էլ լեզվաբանական օրենք է բոլոր նրանց համար, ովքեր ոչ դպրոցական ճանապարհով սովորում են որևէ օտար լեզու³: «Եթե VIII դարի հեղինակը այդ է վկայում, հեղինակ, որ ավելի մոտ է մեր բարբառների աղբյուրներին (°) ժամանակի տեսակետից և որի ժամանակ, հավանական է, դեռ կազմվում էին հայ բարբառները, հասկանալի է, որ մենք այլ վկայի կա-
րի՞նք չունենք:

¹ ԱՅՈՒՂ, նշվ. աշխ., էջ 183:

² Նույն աեղում, էջ 188:

³ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953, էջ 74:

Ուրեմն Սյունեցու այս խոսքը (՝) մեր բարբառների գոյացման երկրորդ ճանապարհի պրոցեսի հեղինակավոր վկայությունն է»¹:

«Ինչպես տեսնում ենք, այս հեղինակը գտնում է, որ հայ բարբառները առաջացել են հայ ժողովրդի կազմավորման ժամանակ և, ճիշտ կերպով բացատրելով, ասում է, թե բարբառները առաջացել են, երբ օտարները սովորել և են հայերեն լեզուն»²:

Ավելորդ է ասել, որ ինչպես մենք պարզեցինք, Սյունեցու այդ մեջբերումը ոչ մի խոսք չի ասում ո՛չ հայ բարբառների ծագման, ո՛չ հայոց լեզուն օտարների կողմից յուրացնելու, ոչ Հայաստանի ու նրա գավառների և ոչ էլ մեր հնչյունական համակարգի տեղաշարժների մասին, հետևաբար որևէ հիմքից զուրկ են պրոֆ. Ղարիբյանի վերոհիշյալ եզրակացությունները, որքանով դրանք բխեցվում են Ստ. Սյունեցու աշխատությունից, հետևաբար նաև վաղաժամ է այն պնդումը, թե «այլ վկայի կարիք չունենք»։ Ոչ. վկայի կարիք ունենք, բայց եթե վկա չենք գտնում, այդ դեռ չի նշանակում, թե մենք իրավունք ունենք որևէ մեկի միանգամայն այլ հարցի մասին տված վկայությունը կամայականորեն խմբագրելու ու մեկնաբանելու՝ հարմարեցնելով մեր պահանջին։

Ընկեր Ղարիբյան, դժբախտաբար, հենց այդպես է վարվել տվյալ դեպքում և, մեծապես սխալվել, որովհետև լուրջ քննության դեպքում նա զրկվում է իր միակ և հաստատուն վկայի վկայության փաստից։

* * *

Բանավիճող երկու կողմերը՝ Ա. Ղարիբյանը և Է. Աղայանը ելնում են իրարից միանգամայն տարբեր, բայց իրենց հավասարապես անսասան ու հաստատուն թվացող կանխակալ դրույթներից և հետևաբար չունեն շփվող ոչ մի եզր։ Ա. Ղարիբյանը, որի ուշադրության կենտրոնը երկար տարիների ընթացքում եղել է մեր բարբառների ստատիկ նկարագրությունը, կարծես հենց դրա հետևանքով, հրաժարվել է պատմականություն և զարգացում որոնելու պահանջից և կատեգորիկ կերպով պնդում է, թե մեր բոլոր բարբառները առաջացել են ոչ թե գրարարից, ոչ թե գրաբարատիպ հին հայերենից, այլ պատմական Հայաստանում տեղադրված այլևայլ ժողովուրդների կողմից հայոց լեզուն յուրացնելու պրոցեսում՝ հեռավոր նախապատմական շրջաններում. հայ բարբառների 3 ճյուղը վերաբաժանելով 6 խմբի և նրանց համար առաջարկելով մի նոր անուն՝ բարբառային ասոցիացիաներ՝ դրանով իսկ նա ժխտում է նույնիսկ միևնույն ճյուղի կամ ասոցիացիայի ներսում պատմության մոտ 2500 տարվա ընթացքում ճյուղավորումների և նույն ճյուղի նոր բարբառների գոյացման հնարավորությունը։ Այսպես, նա գրում է. «Նոր ճյուղերի հայտնագործումը ներշնչեց մոտեցման նոր գաղափար մեր բարբառների նկատմամբ։ Պարզվեց, որ մեր բարբառները առաջացել են ոչ թե առանձին-առանձին, այլ ասոցիացիաներով։ Յուրաքանչյուր նյութ ներկայացնում է բարբառների մի ասոցիացիա և պատմականորեն (ուղում է ասել՝ ի սկզբանե անտի — Գ. Ս.) ունի որոշ տեղադրություն։ Այսպես, օրինակ, «Ում» ճյուղի ասոցիացիան կենտրոնացված է եղել Այրարատում և նրա մերձակայքում՝ և այլն։

¹ Ա. Ղարիբյան. Հայ բարբառագիտություն, էջ 741

² Պատմա-բանասիրական հանդես, № 3, էջ 244 (ընդգծումը մերն է — Գ. Ս.):

³ Նույն տեղում, № 1, էջ 23 (ընդգծումը իմն է — Գ. Ս.):

Եթե սրան ավելացնենք նույն «Հանդեսի» № 1-ում առաջ քաշվող նույնքան կատեգորիկ այն հայտարարությունը, թե «մեր պնդումն այն է, որ բարբառների հնչյունական սիստեմը իր գոյությունը պահպանել է հնդեվրոպական վիճակից սկսած»¹, այսինքն՝ որևէ հայոց լեզվի գոյությունից էլ առաջ, ապա պիտի հանգենք միանգամայն պատմազանցական այն հետևությունը, թե օրինակ, Երևանի, Թրիխսիի, Ղարաբաղի, Ագուլիսի, Ջուղայի, Շամախու բարբառները՝ «Ում» ճյուղի ասոցիացիան, ինչպես և մյուս («Կ», «Հա», «Լ», «Ս») ճյուղերի ասոցիացիաները գոյություն են ունեցել ի սկզբանե անտի: Այս նոր կատեգորիկ պնդումը որոշում է այսօր առկա մեր բարբառների ո՛չ միայն քարացած, անսասան ելման կետը («հնդեվրոպական վիճակ»), այլև նրանց քարացած վիճակը հազարավոր տարիների ընթացքում՝ թույլ չտալով նույնիսկ մտածել, որ ասենք, մի նախնական «Ում» բարբառ կարող էր պատմականորեն ճյուղավորվելով վերածվել մի քանի բարբառների:

Պրոֆ. Աղայանը, ընդհակառակը, հետևելով պրոֆ. Աճառյանի դրույթներին՝ կատեգորիկ կերպով ընդունում է, որ այսօրվա մեր բոլոր բարբառները նոր գոյացություններ են, գրաբարի ծնունդ, որ սաղմնավորվելով II—IV դարերում՝ ձևավորվել են VII—XII դարերում: Նա գրում է. «Այսպես ուրեմն՝ հայերեն բարբառներից և ոչ մեկն էլ գրաբարից հին չէ: Բոլոր հայերեն բարբառները ներկայացնում են գրաբարյան համակարգի հետագա զարգացումը՝ տարբեր ուղղություններով ու ձևափոխություններով»² կամ՝ «Կան նոր հայերեն բարբառներ, որոնք առաջացել են հին հայերենից, որ նույնն է թե գրաբարից՝ սաղմնավորվելով II—IV դարերում և զարգանալով հատկապես VII—XII դարերում»³ (ընդգծ. հեղինակիսն են): Այսպիսով, պրոֆ. Աղայանը հետևում է զարգացում, ճյուղավորումներ, տարբերակումներ ընդունող տեսությանը՝ պատմա-համեմատական լեզվաբանությանը և նույնիսկ փորձում պատմականորեն սահմանել մեր բարբառների սաղմնավորման և հետագա ինտենսիվ զարգացման շրջանները (II—IV դարեր և VII—XII դարեր), ըստ որում միշտ պնդելով՝ որ նրանք բոլորն էլ առաջացել են գրաբարից, գրաբարի ճյուղավորումներն են:

Պարզ է, որ պրոֆ. Ղարիբյանի և պրոֆ. Աղայանի այս տեսակետների միջև ոչ մի ընդհանրություն չկա, և մնում է միայն վարմանալ, թե ինչպե՞ս է, որ երկուսն էլ այնուամենայնիվ հանդես են գալիս միևնույն մեթոդաբանական սկզբունքներով, երկուսն էլ գտնում են, որ իրենք առաջնորդվում են պատմա-համեմատական լեզվաբանության մեթոդով: Պետք է ենթադրել, որ այս դեպքում ամբողջ աշխարհում փորձված և մեր երկրում էլ 1950 թ. լեզվաբանական դիսկուսիայից հետո օրինականացված պատմա-համեմատական մեթոդը չէ այս, մեղմ ասած՝ անհասկանալի հակասության պատճառը, այլ այդ մեթոդի սխալ կիրառումը, որ մեծ տեղ ունի պրոֆ. Ղարիբյանի հետազոտության ոճի և եզրակացություններ հանելու եղանակի մեջ:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», № 3, էջ 44:

² Նույն տեղում, № 2, էջ 225:

³ Նույն տեղում, էջ 229—230. պրոֆ. Աղայանը ընդունում է, որ եղել են նաև հին հայերեն բարբառներ, որոնք սակայն մինչև I—II դարերը մահացել են և ձուլվել ընդհանուր հին հայերենի, այսինքն գրաբարի մեջ (նույն տեղում, էջ 230 և այլուր), սակայն այդ հարցը մենք առայժմ չենք շոշափում:

Արդ, ո՞րն է պրոֆ. Ղարիբյանի ընտրած հետազոտական ոճը: Ի՞նչ եղանակով է նա հետևություններ, եզրակացություններ և ընդհանրացումներ անում ուսումնասիրության ոլորտի մեջ ներգրաված հարուստ նյութից, որի մեծ մասը, ի դեպ, նրա հայտնաբերածն է, նրա ներդրումը հայագիտության մեջ:

Նախ և առաջ այստեղ աչքի է ընկնում այն շտեմնված խզումը, անջատումը, որ նա թույլ է տալիս հնչյունաբանական և քերականական տվյալների միջև՝ փորձ իսկ չանելով ստուգելու բարբառների հնչյունական համակարգի իրողությունների հիման վրա հանած իր եզրակացությունները նույն բարբառների քերականական համակարգի ակնառու և դրանց չներդաշնակող իրողությունների հետ, ըստ որում, ծագումնաբանական հարցերում բացարձակ առաջնությունը տալիս է հնչյունական համակարգին, հակառակ այն բանի, որ լեզվի համար վճռական նշանակություն ունեն նախ և առաջ քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը:

Այսպես, հայերենի մի շարք բարբառների մեջ առկա շնչեղ ձայնեղների հիման վրա նա պնդում է, թե այդ բարբառները դրաբարի համակարգից շատ ավելի հին են և սերում են ուղղակի հնդեվր. նախալեզվից:

Նկատի ունենալով մեր բարբառների միայն բաղաձայնական համակարգը՝ պրոֆ. Ղարիբյանը գծում է հետևյալ պատկերը.

1. Փոքր Հայքի և նրա շրջակայքի բարբառների մեջ «պահպանված է հնդեվրոպական ամբողջ համակարգը բացի խուլերից... դրանք բոլորը նույնն են հնդեվրոպականի հետ»¹:

2. «Հայաստանի կենտրոնական բարբառներում բաղաձայնական համակարգը պահպանել է հնդեվրոպական շնչեղ ձայնեղների շարքը ամբողջությամբ, հետևաբար չէր կարող առաջանալ գրաբարից»² (ընդգծումը Ա. Ղ-ինն է):

3. «Բարբառների արևմտյան խումբը, որ ցրված էր Փոքր Ասիայի արևմուտքում, Սև ծովի հարավային ափերին մինչև Մարմարա ծովը և Փոքր Հայքից արևմուտք ընկած տարածության վրա, ունի բաղաձայնական հետևյալ համակարգը..., բարբառների սույն խմբի համակարգը գրաբարից առաջանալ չէր կարող»³:

Այսպես շարունակվում է՝ Կիլիկիայի և Անտիոքի շրջանի «համակարգի բարբառները նույնպես չէին կարող գրաբարից առաջանալ»⁴, Հյուսիսային Միջագետքի և Հարավ-Արևմտյան Հայաստանը բռնող բարբառների մեծ խումբը «ևս մաքրությամբ պահպանել է հնդեվրոպական պարզ ձայնեղները, ուրեմն և չէր կարող (ընդգծ. Ա. Ղ-ինն է) առաջացած լինել գրաբարի համակարգից»⁵:

Երբ այս դասակարգումը համեմատության մեջ ենք դնում բարբառների ֆեռականական դասակարգման հետ, ստացվում է, որ օրինակ՝ իրենց բաղաձայնական համակարգով միասնական են և «Գենտրոնական Հայաստանի խումբն» են կալվում Կարնո, Մշո, Դիադինի, Նրեանի բարբառները. մինչդեռ իրենց քերականական համակարգով նրանք մտնում են միանգամայն տարբեր ճյուղերի մեջ, օրինակ, Նրեանինը՝ «Ում» ճյուղի, իսկ Կարնո բարբառը՝ «Կը» ճյուղի, ըստ որում նույն ճյուղերի այլ բարբառներ մտնում են հնչյունական

¹ «Պատմա-բանասիրական հանդես», № 1, էջ 30—31:

² Նույն տեղում, էջ 32:

³ Նույն տեղում, էջ 32—33:

⁴ Նույն տեղում, էջ 33:

⁵ Նույն տեղում, էջ 34:

համակարգի միանգամայն տարբեր խմբերի մեջ, օրինակ՝ միևնույն «Ում» ճյուղի Ղարաբաղի բարբառը իր բաղաձայնական համակարգով պատկանում է ռեթրոստիճան ձայնեղազուրկ» խմբին, Երևանի բարբառը՝ «քառաստիճան» խմբին, Ազուլիսինը՝ «եռաստիճան գրաբարատիպ» խմբին։ Նույն ձևով, «Կը» ճյուղի բարբառներից 3-ը (Կարնո, Մշո, Ուզմի)՝ «քառաստիճան» խմբին են պատկանում (ինչպես «Ում» ճյուղի Երևանի և Նոր-Ջուղայի բարբառները), 3-ը (Բիագինի, Ամասիայի և Մոկաց) ունեն գրաբարատիպ բաղաձայնական համակարգ (ինչպես «Ում» ճյուղի Բիլիսիի և Արզվիլի բարբառները), իսկ մնացածները պատկանում են «խլազուրկ» խմբին։

Այսպիսով, ո՛ր կողմից էլ հարցը քննենք, ստացվում է, որ ոչ մի օրինաչափություն գոյություն չունի մեր բարբառների ձևաբանական դասակարգության և բաղաձայնական դասակարգության միջև. միևնույն ձևաբանական խմբի տարբեր բարբառներ պատկանում են միանգամայն տարբեր բաղաձայնական համակարգ ունեցող բարբառային խմբերի, իսկ միևնույն բաղաձայնական համակարգ ունեցող բարբառները ցրված են միանգամայն տարբեր ձևաբանական ճյուղերի։ Այս երևույթի մանրամասն ուսումնասիրությունը կատարել է ինքը՝ պրոֆ. Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտության» մեջ և այլուր. նա անշուշտ նաև նկատել է այդ հակասականությունը, սակայն, ելնելով հայ բարբառների ծագման իր հնչյունաբանական սկզբունքից՝ չի կարողացել գտնել հարցի ճիշտ լուծումը։ Մի կողմից՝ մեր բարբառների առաջացումը կապելով ուղղակի հնդեվրոպական հիմք-լեզվի հետ՝ նա դրանց բաղաձայնական խմբերը դիտում է իրրև միանգամայն ինքնուրույն հնչյունափոխության արդյունք¹, անկախ հայացված տեղաբնիկ ցեղերի լեզուներից, մյուս կողմից՝ հայ բարբառների և նրանց ճյուղերի («ամբողջ ասոցիացիաների») առաջացումը դիտում է իրրև խաչավորման արդյունք՝ տեղաբնիկ ցեղերի կողմից հայոց լեզուն յուրացնելու հետևանք, որը հաստատելու համար էլ այնպես կամայականորեն խմբագրում ու մեկնաբանում է Ստ. Սյունեցու հայտնի ասույթը² և երկու դեպքում էլ անտեսում է բարբառների քերականական կառուցվածքը, ձևաբանական համակարգը։

Սակայն, երբեմն ինքը պրոֆ. Ղարիբյանը կարիք է զգում խոսելու նաև ձևաբանական համակարգի առաջացման մասին և այսպիսի դեպքերում ավելի խճճվում անողոք փաստերի առջև։ Բերենք այդպիսի մի հատված.

«Կը» ճյուղն իր առանձնահատկություններով պարտական է հայ և օտար ցեղերի մի խմբավորման, որի մեջ ընդգրկվել են նաև բիայնացիք Արևելքում և արմենները Արևմուտքում (արմենա-բիայնական խումբ), վերջիններիս լեզվի հաղթանակի հետևանքով առաջացել է տեղացիների լեզվի միաձուլումը հայերենին և «Կը», «Կա» և «Հա» ճյուղերի բարբառների առաջացումը։ «Ում» ճյուղն առաջացել է հայ և նախահայկական ցեղերի միաձուլումից և հատկապես հյուսիսային-ալարոզյան ցեղախմբերի միություն լեզվի մահացման և այդ ցեղերի կողմից հայերենի յուրացման հետևանքով³։

¹ Տե՛ս նրա «տեղաշարժ-տեղափոխությունների» ամբողջ տեսությունը, «Հայ բարբառագիտության» 120—128 էջերը և մանավանդ «Հանդես» № 1-ի 30—38 էջերը։

² Տե՛ս նրա «Հայ բարբառագիտության» 73—74 էջերը և «Հանդես» № 3-ի 243—244 էջերը։

³ Տողատակում նյութին ուղղակիորեն չվերաբերող մի դնում կատարենք այն մտքերի, որ իրար ետևից շարել է այստեղ պրոֆ. Ղարիբյանը։

Եթե «Կը» ճյուղը կազմող ցեղերի խմբավորումը ընդգրկել է «հայ և օտար» ցեղեր և «դրա մեջ ընդգրկվել են նաև բիայնացիք և արմենները» ապա մի՞թե արմենները հայ

«Ս» ճյուղի բարբառներն առաջացել են Ատրպատականի Հյուսիսի, Սյունիքի հարավ-արևելքի և Գողթանի բնակչության լեզուների մահացման և հայերենը յուրացնելու հետևանքով, իսկ «Է» ճյուղի բարբառներն առաջացել են մաննա-մարական, ցեղախմբերի միության լեզուների մահացման և հայերենը այդ ցեղերի միության կողմից յուրացնելու հետևանքով¹։

Ահա հայ բարբառների բոլոր ճյուղերի առաջացման այն պատկերը, որ գծում է ընկեր Ղարիբյանը ոչ հաշվի առնելով անվանված տեղական այդ ցեղերի ու ցեղախմբերի գոյության ժամանակաշրջանը, ոչ որևէ քերականական փաստարկ բերելով նրանց լեզուներից՝ ցույց տալու համար այդ «միաձուլումները», ոչ էլ հաշվի առնելով այն, թե ինչպես կարող են միևնույն լեզուների միաձուլումների հետևանքով առաջացած միևնույն բարբառային ճյուղի մեջ առկա լինել հնչյունաբանական (բաղաձայնական) տարբեր համակարգեր և ընդհակառակը՝ միևնույն բաղաձայնական համակարգի բարբառների միևնույն խմբի մեջ ընդգրկվել ձևաբանական տարբեր ճյուղերի բարբառներ, ինչպես այդ տեսանք վերը, եթե մեր բարբառային խմբերի, ճյուղերի կամ ասոցիացիաների նաև հնչյունական (բաղաձայնական) համակարգերը «առաջացել են, երբ օտարները սովորել են հայերեն լեզուն»², եթե «ամեն մի գավառի բարբառային արտասանությունը հետևանք է բնիկների կողմից հայերենը սովորելու պրոցեսում հայերենի բաղաձայնական սիստեմը իրենց լեզվի հնչյունական օբեկտներին ենթարկելու սովորության»³։

Հայոց լեզուն՝ ըստ տարբեր տերիտորիաների տարբեր ցեղերի բնիկների կողմից յուրացնելու հետևանքով իբր թե առաջացած մեր բարբառների խմբերից յուրաքանչյուրը իր ներսում պետք է որ ունենար հնչյունական համակարգի և ձևաբանական համակարգի միասնականություն, քանի որ յուրաքանչյուր խումբը առաջացել է նույն հայերենի և նույն բնիկ ցեղի լեզվի, «միաձուլումից», անկարելի է, որ իբր թե այդպիսի եղանակով առաջացած բարբառային մեկ խմբի մեջ լինեն միանգամայն տարբեր խմբերին հատուկ հնչյունական համակարգ և, բնդհակառակը, տարբեր ձևաբանական խմբերի մեջ լինեն միևնույն հնչյունական համակարգը կրող բարբառներ։

Պրոֆ. Ղարիբյանը սովորաբար անցնում է մեր բարբառային ճյուղերի ձևաբանական և հնչյունաբանական համակարգների հակասականության կողքով՝ անտեսելով այդ կարևորագույն խնդիրը, որի լուծումը պահանջում է մանրակրկիտ պատմա-համեմատական ուսումնասիրություն, իսկ իր «Հայ բարբառագիտության» մեջ անցողակիորեն անդրադառնում է դրան և շուտասելուկի կարգով «լուծում» հետևյալ արտահայտություններով.

ցեղ չեն եղել. եթե «արմենա-բիայնական խմբի լեզվի հաղթանակի հետևանքով առաջացել է տեղացիների լեզվի միաձուլումը հայերենին և «Կր», «Կա», «Հա» ճյուղի բարբառների առաջացումը», ապա ո՞րն է հայ ցեղը, որն է օտար ցեղը, ինչպե՞ս կարող էին միաձուլվել «բիայնացիք Արևելքում» և «արմենները Արևմուտքում», մանավանդ, ինչպե՞ս կարող էր լեզուների միաձուլումը տալ հայ բարբառ, հայոց լեզու. եթե «Ռ. մ. ճյուղը առաջացել է հայ և նախահայկական ցեղերի (Իհարկե, ենթադրվում է նրանց լեզուների—Գ. Ս.) միաձուլումից և հատկապես հյուսիսային-այսրոյան ցեղախմբերի միություն լեզվի մահացման հետևանքով, ապա ինչպե՞ս կարող է մահացումը տալ միաձուլում. և վերջապես, այս միաձուլումների և միաձուլումների հետևանքով բարբառներ կամ լեզուներ առաջանալու տեսությունը չի՞ հիշեցնում արդյոք լեզվաբանական դիտություն հետ ոչ մի կադ շունեցող չարարատիկ «խաչավորումների տեսությունը», որից բոլորս կարծես անվերապարձ հրամարվել ենք։

¹ Լ. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, էջ 177։

² Պատմա-բանասիրական հանդես, № 3, էջ 244։

³ Հայ բարբառագիտություն, էջ 74։

«Այս վերլուծությունից կարող ենք մի եզրակացություն անել, դա այն է, որ բաղաձայնական սիստեմով նման բարբառները միմյանց հաջորդաբար են եղել. աշխարհագրորեն մոտիկ դասավորված, ուստի եթե դրանցից մեկը կամ երկուսը գտնում ենք այժմ ավելի հեռու և կամ շատ հեռու, պետք է ենթադրել, որ զաղթած են այդ միջավայրից... Ըստ երևույթին, բաղաձայնական սիստեմի էյուզավորումներն ստեղծվել են ավելի հին ժամանակներից քան ձևաբանական տարբերակումները»¹:

Այստեղ արդեն առաջ են քաշվում նոր գործոններ՝ տաբաձային (միմյանց հարևան լինելը) և ժամանակային (ավելի հին ժամանակներում), որոնք հարցը լուծելու փոխարեն առավել խճճում են: Եվ իրոք. եթե ընդունենք, որ, օրինակ, «Կը» ճյուղին պատկանող Մշո բարբառը, որ ունի շնչեղ ձայնեղներ, նախապես ավելի մոտ է եղել Երևանին, որի բարբառը նույնպես ունի այդ հնչյունները, և Մշո բարբառը Երևանից հեռանալուց հետո պահպանել է իր հնչյունական համակարգը, բայց փոխել ձևաբանական համակարգը, ապա ի՞նչ ասենք նույն Երևանին կալած մնացած Քանաքեռի խոսվածքի մասին, որը նույն Երևանի բարբառին պատկանելով հանդերձ չունի շնչեղ ձայնեղներ, և Ագուլիսի բարբառի մասին, որ դարձյալ մոտիկ լինելով Երևանին՝ նույնպես չունի այդ բաղաձայնները, ինչպես և բոլորովին շտեղափոխված և «Ում» ճյուղի մեջ մնացած Ղարաբաղի բարբառի մասին, որը Երևանի քառասույձան համակարգի դիմաց ունի երկաստիճան համակարգ՝ չունենալով ոչ միայն շնչեղ ձայնեղներ, այլև պարզ ձայնեղներ: Եվ մյուս կողմից՝ եթե բաղաձայնական սիստեմի մեծ տարբերությունները հայերենի կողմից հաղթված նախկին տոհմական լեզուների վերապրուկներն են² ինչպես կրկին ու կրկին պնդում է պրոֆ. Ղարիբյանը, ապա ինչպես է, որ «նախկին տոհմական լեզուները» միևնույն բարբառներին տվել են տարբեր հնչյունական ու ձևաբանական համակարգներ, իսկ տարբեր ձևաբանական համակարգի բարբառներին՝ միևնույն հնչյունական համակարգը:

Այսպիսով տաբաձային մեկնաբանությունը ոչ թե լուծում, այլ առավել բարդացնում է հարցը: Նույնպիսի վիճակ է ստեղծում և ժամանակային մեկնաբանությունը: Եթե մի բոլոր ընդունենք, որ իսկապես, հայ բարբառները իրենց բաղաձայնական համակարգները ստեղծել են ավելի հին ժամանակներից, քան ձևաբանական տարբերակները, որպիսիք պետք է առաջ դաշին հնչյունական այս կամ այն համակարգը ձեռք բերելուց և տվյալ միջավայրից զաղթելուց հետո, ապա ինչպե՞ս կարող էր պատահել, որ նոր միջավայրում տեղական տոհմական լեզուների ժողովրդավար նրանք փոխել են իրենց ձևաբանական համակարգը, բայց պահպանել են մի ուրիշ տերիտորիայում մի ուրիշ տոհմական լեզվից ստացած հնչյունական համակարգը, երբ ըստ պրոֆ. Ա. Ղարիբյանի հայոց լեզվի բոլոր բարբառների թե՛ հնչյունական և թե՛ ձևաբանական համակարգները առաջացել են «տեղական տոհմական լեզուների», «տեղաբնիկ ցեղերի լեզուների», «յուրաքանչյուր դավառի նախկին ցեղի լեզվի» և հայերենի միաձուլման ճանապարհով...

Սակայն բավական է. կարծում ենք՝ միանգամայն անհիմն և անհամոզիչ է պրոֆ. Ղարիբյանի ողջ տեսությունը հայ բարբառների ծագման մասին, քանի

¹ «Հայ բարբառագիտություն», էջ 383:

² Նույն տեղում:

որ նա անտեսում է և չի ընդունում հայոց լեզվի և նրա բարբառների ինքնագագացումը, նրանց զարգացման ներքին օրենքները և ամեն ինչ բացատրում է տեղական ցեղերի, տեղական տոհմերի միանգամայն կամ տեղական, անընդհատ կամ ընդհատավոր ազդեցության գործոններով՝ արհամարհելով փաստերը և ընկնելով հակասությունների մեջ:

Պրոֆ. Ղարիբյանի ընտրած հետազոտական ոճի, հետևություններ և ընդհանրացումներ անելու եղանակի համար բնորոշ է ո՛չ միայն լեզվի (բարբառների) քերականական համակարգի և հնչյունաբանական համակարգի խզումը, անջատումը և ծագումնաբանական հարցերում առաջնությունը զարմանալիորեն հնչյունական համակարգին հատկացնելը, ինչպես այդ պարզեցինք վերը, այլև՝, որ առավել զարմանալի է, գրաբարի անտեսումն ու մեկուսացումը հայ լեզվի և նրա բարբառների առաջացման ու զարգացման պրոցեսի նկարագրման մեջ: Ընկեր Ղարիբյանը առանց աղմկի, կամացուկ կատարում է մի վիթխարի հեղաշրջում հայագիտության մեջ՝ առանց որևէ յուրջ ու ծանրակշիռ հիմունքի: Եվ իրոք. հարյուր տարուց ավելի է, ինչ պատմա-համեմատական լեզվաբանությունը տասնյակ տաղանդավոր գիտնականների մի քանի սերունդների ջանքերով հաստատում է, որ գրաբարը իր հնչյունական և քերականական համակարգով հանդիսանում է հայոց լեզվի ամենահնագույն և հնդեվրոպական հիմք-լեզվին ամենամոտե կանգնած լեզվասիստեմ, որ մեր բոլոր բարբառների թե՛ հնչյունական, թե՛ ձևաբանական համակարգը գրաբարից է բխած, գրաբարի համակարգի ծնունդ է, նրա զարգացման, բաժանման, տրոհման արդյունք, մինչդեռ պրոֆ. Ղարիբյանը գրաբարը իր հնչյունական և ձևաբանական համակարգով մեկուսացնում՝ փաստորեն հանում է հայ բարբառների ծագման և զարգացման ուսումնասիրության ոլորտից և դիտում իբրև հետնազույն դոյացում՝ մի ինքնուրույն բարբառ կամ ինքնուրույն բարբառախմբի ներկայացուցիչ միայն՝ հայտարարելով. թե «բարբառների հնչյունական սիստեմը իր գոյությունը պահպանել է հնդեվրոպական վիճակից սկսած»¹, թե «մեր բարբառների ձևաբանական կառուցվածքը ավելի հին ժամանակներից է գալիս, քան մեզ ծանոթ գրաբարի կառուցվածքը»²:

Գտնելով, որ միանգամայն անկարելի է որևէ կերպ համաձայնել պրոֆ. Ղարիբյանի պաշտպանած այս ոչ այնքան էլ նոր «տեսության» գրույթներին՝ առաջ և նախ անհրաժեշտ եմ համարում պարզել, թե որքա՞ն ազատ է զգում նա իրեն նույնիսկ իր սեփական մտքերը ձևակերպելու մեջ: Եթե մեր «բարբառների հնչյունական սիստեմը. — ինչպես ասում է նա, — իր գոյությունը պահպանել է հնդեվրոպական վիճակից սկսած», — այդ պիտի նշանակի, թե հնդեվրոպական հիմք-լեզվի մեջ, նրա բաժանումից առաջ մեր բարբառները կային իրենց տեղաշարժ-տեղափոխություններով, քառաստիճան, եռաստիճան, երկաստիճան, խաղուրկ և ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգներով. իսկ այդ, մի կողմից՝ նշանակում է, թե հնդեվրոպական վիճակը, այսինքն՝ հնդեվրոպական հիմք-լեզուն չի ունեցել նույնիսկ շատ թե քիչ միօրինակ հնչյունական համակարգ. մյուս կողմից՝ թե մեր բարբառները բարձրանում են ինքնուրույն լեզուների մակարդակի, որոնք հնդեվրոպական վիճակում ունեցել են իրենց իրարից անկախ ու տարբեր հնչյունական համակարգները,

¹ «Պատմա-բանասիրական հասկում», № 3, էջ 244:

² Նույն տեղում, էջ 254:

իսկ այս էլ նշանակում է, թե միանգամայն անհեթեթ է դառնում պրոֆ. Ղարիբջանի այն տեսությունը, ըստ որի մեր բարբառների հնչյունական համակարգները առաջացել են տեղաբնիկ ցեղերի լեզուների և հայերենի միաձուլումից, համադրությունից (=խաչավորումից), թե «ամեն մի գավառի բարբառային արտասանությունը հետևանք է բնիկների կողմից հայերենը սովորելու պրոցեսում հայերենի բաղաձայնական սիստեմը իրենց լեզվի հնչյունական օրենքներին ենթարկելու սովորության»¹:

Այժմ հաջորդաբար քննենք մեր բարբառների հնչյունական համակարգը գրաբարի համակարգից անկախ ու հնազույն համարելու պրոֆ. Ղարիբջանի այս «տեսություն» հիմունքները: Ինչպես հայտնի է, պրոֆ. Ղարիբջանը հնչյունական համակարգի իր տեսության ամենավճռական կովան համարում է այն, որ գրաբարը շունի հնդեվրոպական շնչեղ ձայնեղների ողջ շարքը (բհ, գհ, դհ), մինչդեռ շուրջ տասներկու բարբառներ պահպանել են այդ հնչյունները. «Հայերեն բարբառներից տասներկուսը պահպանել են հնդեվրոպական բաղաձայնական համակարգը համարյա անվթար վիճակում, մինչդեռ գրաբարը տեղաշարժել է նշանակում է, նրանք ներկայացնում են լրացաձայնական համակարգի ավելի հին վիճակ, քան գրաբարի վիճակն է»²: Քանի որ պրոֆ. Աղայանը իր «Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին»³ խորագրով հոդվածում, հենվելով պատմա-համեմատական լեզվաբանության անհողողող տվյալների վրա՝ կրկին անգամ հավաստել է, որ անկարելի է մեր բարբառների հնչյունական համակարգը համարել գրաբարի համակարգից անկախ և նրանից ավելի հին, մենք կփորձենք վերլուծել այն նոր «հիմնավորումները», որ մեջ է բերում պրոֆ. Ղարիբջանը իր պատասխան հոդվածում:

Ելնելով այն դրույթից, որ բարբառների շնչեղ ձայնեղները հետնագույն գոյացում են և ոչ թե առաջնային, նախագրաբարյան՝ պրոֆ. Աղայանը այդ դրույթը հաստատում է նաև նրանով, որ բ-ն, գ-ն, դ-ն և այլն բհ, գհ, դհ են դարձել ոչ միայն գրաբարի, ընդհանուր հայերենի հնդեվրոպական բառերի, այլև հետագա փոխառությունների մեջ, օրինակ՝ գրաբար բեռան, բարբառներում՝ բիեռան, բայց և պահլավ. բազուկ, բարբառներում՝ բիազուկ և այլն: Արդ, առարկելով այս դրույթին, պրոֆ. Ղարիբջանը գրում է. «Մենք հակառակն ենք կարծում: Մեր կարծիքով մեր բարբառներն այդ փոխառությունների ժամանակ ունեցել են արտասանական որոշ համակարգ, և ամեն մի բառ, որն ընկել է այդ բարբառների լեզվական ոլորտը, ենթարկվել է նրանց արտասանության օրենքներին»⁴:

Ապա նա բերում է հնդեվրոպական հնչյունական համակարգին իբր թե ամենից հավատարիմ մնացած Մշո, Կարնո, Երևանի և այլ բարբառների մեջ գրաբարի և այլ լեզուների բ-ի դիմաց բն ունենալու «անխախտ օրենքը» նույն բազուկ բառի օրինակով, որ նրանք դարձրել են բիազուկ: Սակայն հենց այստեղ էլ երևում է ընկեր Ղարիբջանի տեսության անճշտությունը: Եթե քառասուիճան բաղաձայնական սիստեմ ունեցող բարբառները ամենայն հավատարմությամբ պահպանել են հնդեվրոպական համակարգը (նրանք ունեն բհ, բ,

¹ «Հայ բարբառագիտություն», էջ 74. հմմտ. նաև «Պատմա-բանասիրական հանդես», № 3, էջ 241: Ստ. Սյունեցու առույթի ղեկավարությամբ:

² «Պատմա-բանասիրական հանդես», № 3, էջ 245:

³ Նույն տեղում, № 2, էջ 214-220:

⁴ Նույն տեղում, № 3, էջ 245:

ւյ, պհ), ապա ինչու հենց հնդեվրոպական այն բառերն էլ, որոնք հիմք-լեզվում էլ բ-ով են սկսվում, նրանք, օրինակ՝ Երևանի բարբառը, ոչ թե պահպանել են բ-ով, այլ արտասանում են բհ-ով. նույնը պետք է ասել և հնդեվր. գ, դ հնչյունների մասին, որոնք այդ բարբառների մեջ բառասկզբում տվել են զհ, դհ: Սա, իհարկե, համակարգ է, սակայն ոչ թե հնագույն հնդեվրոպական, այլ հետնագույն բարբառային: Այդ բարբառների հատկություն է դարձել բառասկզբի բ-ն դարձնել բհ, գ-ն՝ զո, դ-ն՝ դո և այլն, ուստի և նրանց համար բհ է և գրաբարի բ-ն, որ գալիս է հնդեվրոպական բհ-ից, և բոլոր լեզուներից փոխառյալ բառերի բ-երը, որոնք չեն գալիս հնդեվրոպական բհ-ից (օրինակ՝ պահլավերեն բազուկ, որ նրանք դարձրել են բհազուկ): Մյուս կողմից, հայտնի է, որ գրաբարի պ-ն գալիս է և՛ հնդեվրոպական բ-ից, և՛, ասենք, իրանական պ կամ փ-ից: Արդ, հարց է ծագում, թե «հնդեվրոպական համակարգը պահպանած» այդ բարբառները ինչու են գրաբարի բառասկզբի պ-ի դեմ ամենուրեք տալիս պ, և ոչ թե հնդեվրոպական բ-ից եկող պ-ն պահում բ, իսկ, ասենք, պահլավական պ կամ պհ-ից եկող պ-ն միայն պահում պ:

Ախպես

հնդեվր. գրբ. բարբ.
bend պինդ պինդ

պահլ. գրբ. բարբ.
pahr պահ պահ

Պետք էր սպասել, որ ուղղակիորեն հնդեվրոպական հնչյունական համակարգից եկող բարբառները, որոնք ունեն և՛ բ, և՛ պ հնչյունները, առաջին դեպքում բ-ն պահեն բ (բինդ), և ոչ թե գրաբարի նման դարձնեն պինդ, և միայն երկրորդ դեպքում տալին պ:

Լեզվաբանի համար հասկանալի է, որ այդպիսի հնչյունական փոփոխությունները կատարվում են օրինաչափորեն, կազմում են ամբողջական համակարգ և կարող են հաստատվել անհամար օրինակներով, ըստ որում ոչ միայն բ-պ, այլև գ-կ, դ-տ, ռ-րհ, գ-զհ, դ-զհ հնչյունափոխությունների ոլորտում: Իսկ այս նշանակում է, որ, ասենք, Երևանի բարբառի բհ-ն գալիս է ոչ թե հնդեվրոպական բհ-ից, իսկ պ-ն՝ հնդեվրոպական պ-ից, այլ որ գրաբարի բ-ն բարբառի մեջ դարձել է բհ, իսկ գրաբարի պ-ն մնացել է անփոփոխ պ նույնիսկ այն դեպքում, երբ հնդեվրոպական հիմք-լեզվում նա բ է: Իսկ սրանով հերքվում է պրոֆ. Ղարիբջանի տեսությունը և հաստատվում պատմա-համեմատական լեզվաբանության դրույթը:

Ի դեպ, պրոֆ. Աղայանը պաշտպանելով հնդեվրոպաբանության այդ անառարկելի դրույթը՝ միանգամայն տեղին կերպով ցույց է տալիս, որ բարբառների մեջ եղած զհ հնչյունը նույնպես ոչ մի կերպ չի կարելի ուղղակիորեն կապել հնդեվրոպական գհ-ի հետ, քանի որ նույն այդ բարբառներում զո ունենք ոչ միայն հնդեվր. գհ-ի դիմաց, այլև հնդեվր. վ-ի դիմաց: Պարզ է, որ վ-ն գհ դառնալ ոչ մի կերպ չէր կարող առանց գրաբարի միջնորդության: Նա գրում է. «Անվերապահ ճշմարտություն է, որ նախ V(W)-ն պետք է դառնար զ, իսկ հետո էլ այդ բարբառներում շնչեղանար¹: Դրա հետ բերում է նաև մի շարք օրինակներ՝ դառն (հնդ. vāren), գործ (հնդ. worg¹), այլև գսրի, զուրտ, զաբուն, զազել, զաղտնի, որոնք բարբառներում տվել են զհառ, զնորձ և այլն: Պարզ է, որ այսպիսի բառերի գհ-ն չի գալիս հնդեվր. գհ-ից, քանի որ

¹ «Պատմա-բանասիրական հանդես», № 2, էջ 218:

այնտեղ այդ բառերը վ-ով են և ոչ թե գհ-ով կամ գոնե գ-ով: Միանգամայն պարզ է, որ հնդեվր. այդ վ-ն հին հայերենում (և գրաբարում) դարձել է գ, իսկ բարբառները հետագայում այդ գ-ն շնչեղացրել են և դարձրել գհ: Այստեղ, կարելի է ասել, ընկ. Աղայանը մատը դրել է ընկ. Ղարիբյանի տեսության ամենախոցելի տեղին, բռնել նրա ամենախախտ կռվանը: Եվ ի՞նչ, ինչպե՞ս է պաշտպանվում ընկ. Ղարիբյանը այս դժվար մարտում: Նա դիմում է ուղղակիորեն դրված հարցից խուսափելու և ուղղակիորեն բերած օրինակները փոխելու միջոցին:

Պրոֆ. Ղարիբյանը պրոֆ. Աղայանին նախ հանդիմանում է, թե «հայտնի չէ թե ի՞նչ ուղիներով այդ $V(W)$ -ն գրաբարում դարձել է գ, և հետո նրա բերած օրինակներից ոչ մեկը հերքելու ենթակա չհամարելով՝ իրենից է առաջ քաշում մի նոր օրինակ (ղինի բառը) և հերքելով կամ մի կերպ բացատրելով այդ բառի հնդեվր. $V(W)$ -ն գրաբարում գ, իսկ որոշ բարբառներում գհ դառնալու իրողությունը՝ կարծում է, թե դրանով հաստատեց յուր տեսությունը:

Նախ պետք է նկատի ունենալ, որ զինի բառի ծագումն ու ստուգաբանությունը հենց պատմա-համեմատական լեզվաբանության մեջ լուրջ կասկածների տեղիք է տվել անկախ հայերենից, և երկրորդ ընկեր Աղայանը, իբրև պատմա-համեմատական մեթոդի և ընդհանուր լեզվաբանության մասնագետ, անշուշտ այդ իմանալով, չի բերել այդ բառը, ուստի և պրոֆ. Ղարիբյանը պետք է առաջ քաշեր ոչ թե այդ եզակի և կասկածելի բառը, այլ սխտեմ ներկայացնող այն բառաշարքը, որ մատչելի է ամեն լեզվաբանի և կարելի է գտնել ստուգաբանական բառարաններում, կամ գոնե այն բառերից մեկը, որոնց վրա հենվում է պրոֆ. Աղայանը: Բայց այդպես չի վարվում պրոֆ. Ղարիբյանը. իմանալով հանդերձ¹, որ հնդեվրոպական հիմք-լեզվում զինի բառը չի եղել, որ հնդեվրոպ. առանձին ժողովուրդներ միայն հետագայում են այդ բառն ստացել էդեյական կամ միջերկրական ժողովուրդներից ուղղակի կամ անուղղակի ճանապարհով՝ նա այլևայլ ենթադրություններ է անում այդ բառի մասին և իր այդ ենթադրությունները, այն էլ ոչ հնդեվրոպական բառի մասին, տարածելով հնդեվրոպական $V(W)$ -ից գրաբարում գ և բարբառներում գհ առաջանալու պրոցեսի վրա՝ ազդարարում. «Այսպիսով, պրոֆ. էդ. Աղայանի այս ծանր հրետանին էլ գործին չօգնեց»²:

Դժվար է պատկերացնել ավելի խաբուսիկ հաղթանակ, քան այն, ինչ ձեռք է բերվում այսպիսի եղանակով:

Իրողությունը մնում է այն, որ հնդեվրոպական բազմաթիվ բառերի $V(W)$ հնչյունը դրաբարում (ոչ միայն բառասկզբում, այլև բառամիջում) դարձել է գ, իսկ մի շարք բարբառներում՝ գհ. հետևաբար, այդ գհ (որ կարող էր առաջ գալ միայն գ-ի շնչեղացմամբ) ոչ մի ուղղակի կապ չունի հնդեվրոպ. հիմք լեզվի հետ (որտեղ նա V կամ W է), այստեղից էլ ուղղակի բխում է, որ ինչպես վերը քննած (բ-բհ, գ-գհ, դ-դհ և այլ) դեպքերում, այնպես էլ հնդ. $V(W)$ -ից եկող այս գ-գհ դեպքում, ոչ թե մեր բարբառների բհ, գհ, դհ են հնագույն և հնդ. համա-

¹ Այդ վկայվում է նրանով, որ պրոֆ. Ղարիբյանի հիմնավորումների մեջ կրկնված են պրոֆ. Աճառյանի՝ այդ բառի մասին արված որոշ անդեկություններ («Հայոց լեզվի պատմություն», 1 մաս, էջ 103), հենց որտեղ էլ նա զինի բառը համարում է ոչ թե հնդեվրոպական, այլ փոխառյալ:

² «Պատմա-բանասիրական հանդես», № 3, էջ 254:

կարգից եկող, այլ գրաբարյան ր, զ, դ-ն, որոնք որոշ բարբառներում որոշակի կերպով վերածվել են բն, զն, դն-ի: Մեզ թվում է, թե ընկեր Ա. Ղարիբյանը այնուամենայնիվ, վաղ թե ուշ, իր իսկ հայտնաբերած ու նկարագրած բարբառային հարուստ նյութի թելադրանքով կհանգի գիտական ճիշտ հետևությունների, կրնդունի, որ ընկ. Աղայանի ասածների մեջ կան շատ ճշմարտություններ, որոնց հանգեցրել են լեզվական տվյալները և պատմա-համեմատական մեթոդի ճիշտ կիրառումը:

Այս ասելով ես բնավ չեմ պաշտպանում պրոֆ. Աղայանի առաջ քաշած այն նոր դրույթը, թե իրր հին հայերենի բարբառները աստիճանաբար մահացել են մինչև II—IV դարերը և լուծվել համաժողովրդական գրաբարի մեջ և նույն II—IV դարերում սահմանավորվել են նոր հայերեն բարբառները աստիճանաբար տարբերակվելով գրաբարից: Անհամաձայն լինելով նրա հետ այս հարցում՝ ես անհերքելի եմ համարում բոլոր հնդեվրոպաբան հայագետների այն դրույթը, որ մեզ ծանոթ բոլոր հայ բարբառների հնչյունական և քերականական համակարգը հին հայերենի՝ գրաբարյան համակարգից է սերել և չի կարող ավելի հին լինել նրա համակարգից, քան որում ես տարրերում եմ գրաբար գրական լեզուն՝ գրաբարյան համակարգից, որը շատ ավելի հին է, քան մեզ ծանոթ գրաբար լեզուն:

К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ АРМЯНСКИХ ДИАЛЕКТОВ

ГУРГЕН СЕВАК

(Р е з ю м е)

Статья является откликом на дискуссию между проф. А. С. Гарибяном и проф. Э. Б. Агаяном по вопросу о происхождении армянских диалектов¹. Оба автора, признавая сравнительно-исторический метод, приходят к совершенно противоположным заключениям по одному и тому же вопросу. Так, проф. Гарибян категорически утверждает, что армянские диалекты со всем их разнообразием фонетической системы и грамматического строя более древни, чем грабар (древнеармянский язык) и восходят непосредственно к индоевропейскому праязыку, в то время как проф. Агаян систему всех современных армянских диалектов, вслед за проф. Ачаряном, выводит из грабара, приурочивая их происхождение ко II—IV и, особенно, к VII—XII векам нашей эры.

Признавая систему грабара наиболее архаичной и наиболее близкой к индоевропейскому праязыку, автор статьи рассматривает армянские диалекты как продукт распада общеармянского или праармянского языка, его ответвлениями, прямым продолжением и дальнейшей литературной обработкой которого и является грабар. Следовательно, системы армянских диалектов, хотя и более древни, чем древнеписьменный литературный грабар, и не исходят из последнего, но грабар, как прямолинейное продолжение общеармянского языка и наиболее близкая

¹ См. Историко-филологический журнал, № 2 и 3.

к нему языковая система, во всяких исследованиях может рассматриваться как исходная позиция для армянских диалектов. Таким образом, автор статьи отвергает «новую» точку зрения проф. Гарибяна о выведении армянских диалектов непосредственно из индоевропейского состояния, минуя систему древнеармянского языка, грабара. Автор подвергает критике доводы и аргументацию проф. Гарибяна (главным образом фонетические) и приходит к заключению, что:

1. Эти выводы несостоятельны сами по себе;
2. Они противоречивы внутри себя;
3. Аргументации, будто объясняющие возникновение фонетической системы армянских диалектов, находятся в явном противоречии, с его же, проф. Гарибяна, аргументациями, приводимыми в пользу объяснения возникновения морфологической системы тех же диалектов;
4. В явном противоречии со всей «новой» теорией проф. Гарибяна о прямом и непосредственном происхождении армянских диалектов из индоевропейского праязыка находится также его категорическое утверждение, будто все армянские диалекты являются продуктом освоения армянского языка местными неармянскими племенами на различных территориях древней Армении;
5. Проф. Гарибян слишком «свободно» оперирует не только языковыми фактами, но и авторитетом такого грамматиста VIII века, как Степанос Сюнеци, высказывания которого о происхождении отдельных языков из одного языка путем изустных искажений он явно преднамеренно «переводит» и «толкует» так, чтоб его (Ст. Сюнеци) превратить в свидетеля в пользу своей (А. Гарибяна) «новой» теории происхождения армянских диалектов;
6. Проф. Гарибян неправильно применяет сравнительно-исторический метод, несмотря на его безоговорочное признание.

Автор статьи отмечает, что армянская диалектология до сих пор развивалась главным образом как описательная диалектология или диалектография, незаслуженно игнорируя русскую школу армянской диалектологии (проф. Патканов, проф. Томсон, Л. Мсерьянц и др.), и призывает к восстановлению научных традиций этой школы.